

ԶՐՈՒՅՑՆԵՐ
ԽԱՐՈՒՅԿԻ ՇՈՒՐՋԸ



ՊԱՏԱՆԻ ՀԵՏԱԽՈՒՅՁԸ


ՊԵՏՏՐԱՏ

31 JAN 2018

ՋՐՈՒՅՑՆԵՐ ԽԱՐՈՒՅԿԻ ՇՈՒՐՋԸ

ՊԱՏԱՆԻ ՀԵՏԱԽՈՒՅՋԸ

Քարգմանեց
Մ. ԴՈՒՐԳԱՐՅԱՆ



ՊԵՏԶՐԱՏ

ՀԱՅԵՍՏԱՆԻ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ՖԵՐԵՎԱՆ

1937

Պատ. խմբագիր՝ Հր. ԿՈՔՈՂՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ան. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Սրբագրիչ՝ Ս. Փարսադանյան

Գլավխտի լիազոր՝ Խ — 9237 Հրատար. 4190
Պատվեր 957, Տիրաժ 1500
Պետհրատի տպարան, Յերևան, Լենինի, 65



1-36789r

ՊԱՏԱՆԻ ՀԵՏԱԽՈՒՅՁԸ*)

Նա տասնևմեկ տարեկան ե: Իրունի կոշկա-
կարի վորդի լե նա: Փաշխատների աշրած քաղա-
քում մթնոլորտը չափազանց լարված եր: Թըն-
դանոթների վորոտների տակ ճակատ ելին մեկ-
նում բանվորական խմբերը, վորպեսզի լետ վա-
նեն հանրապետականների թվից լերեք անգամ
ավելի թվով թշնամիներին:

Մալրն ուրիշ բազմաթիվ կանանց հետ հեռա-
ցել եր քաղաքից: Պեղրոն լեա ընկավ հեռա-
ցողների շարքից: Մալրը չկարողացավ նրան
դտներ: Հալրն ընկավ թշնամու գնդակից աչն
ժամանակ, լերը առաջնորդում եր իր ջոկատը:
Պեղրոն մենակ մնաց:

Մի ամբողջ որ թափառեց քաղաքում: Նա քաղ-
ցած եր: Փողոցներով անցնում եր դումակը,
դուրս գալով աչն միակ ճանապարհի վրա, վորը
դեռ չեր գնդակոծվում Փաշխատների կողմից:
Թշնամու ումբերից վառվում ելին տները: Մահն
ու ավերը թագավորում ելին շուրջը:

*) Իսպանական Կոմկուսակցության «Մուսու-
Որբերո» թերթի նյութերից:

Պեղրոն փողոցում տեսավ իր հոր հին բարեկամին: Նա միլիցիոների զգեստով էր, հրացանը՝ ձեռքին:

— Դու այստեղ ի՞նչ ես անում, այ տղա: Արցունքից խեղդվելով, Պեղրոն պատմեց հոր մահվան մասին, ասաց վոր քաղցած է ու մենմենակ, և վախենում է:

— Գնանք ինձ հետ. — ասաց հոր բարեկամը: Յեվ Պեղրոն դարձավ բանվորական շոկատի գավակը: Նրան հրացան տվին: Նա մեծի պես կռվում է ֆաշիստների դեմ: Չորտնջալով կռվի դժվարություններից, ամեն բանում աշխատում էր մեծերին նմանվել:

— Յես արդեն տամերկուսիս մեջն եմ — հպարտությամբ ասաց նա:

Յերբ ստացվեց հանրապետական հրամանատարության կարգադրությունը — անչափահաս մարտիկներին բոլորին թիկունքն ուղարկելու մասին, Պեղրոն արցունքն աչքերին աղերսում էր իր պետին, իրեն ճակատում թողնելու համար: Նրան պաշտպանեցին շոկատի բոլոր մարտիկները, վորոնք սիրում էին նրան հարազատ վորդու նման: Յեվ Պեղրոն մնաց ճակատում:

Այդ որվանից պատանի հետախույզ Պեղրո Չինեստան հայտնի լեղավ ճակատում՝ բոլորին:

Այս պատանի մարտիկը ցույց էր տալիս համարձակություն և հերոսություն հրաշքներ:

Մեկ անգամ նահանջի ժամանակ պետք էր փնտռել անվտանգ կերպով անցնելու հարմար տեղ գետում:

Պատանի Պեղրոն խնդրեց հրամանատարին՝ իրեն վստահել այդ հանձնարարությունը: Թույլտվություն ստանալով, նա շտապեց դեպի գետը և, չնայելով շուրջը տեղացող ուժմբերին, սկսեց սուզվել ու թպրտալ ջրերում, ծանծաղուտ փնտռելով:

Վերջապես գտավ և պատանի Պեղրոն իր շոկատն առաջնորդեց մյուս ափը:

Հաճախ Պեղրոն հետախուզում էր հեռուները, ֆաշիստների զորքի տեղը վորոշելու համար: Մողեսի նման նա սողում էր թշնամու առաջապահ դիրքերում և անհրաժեշտ տեղեկություններ էր բերում:

Խաղաղ ժամանակ, լերբ զորքերը վաչելում ելին հանգստի հազվագյուտ ժամերը, պատանի Պեղրոն գրպանից հանում է կարմիր փողկապը և վիզը կապելով հպարտությամբ ասում — Յես պիոներ եմ:

Յեվ պատմում է մարտիկներին իր ընկերների՝ պիոներների մասին, վորոնք իրեն նման կռվում են խռովարարներին դեմ: Նա պատմում է, թե

ինչպես Տորիոզ քաղաքում ֆաշիստները բռնեցին մի տղայի՝ կարմիր փողկապը վզին: Ֆաշիստ գազանները սուր ածելիով կտրեցին նրա ձեռքերի մատները:

Մի ուրիշ քաղաքում, Պալմա դե-լա-Ռիոյում, ֆաշիստները բռնում էլին ձեռքերն ընկած լեռեխաներին կամ խուզարկության ժամանակ հավաքում էլին նրանց ու ասում. «սալուդ» (սալուտ): Շատ լեռեխաներ, լսելով այդ ծանոթ վողջույնը, ուրախանում էլին ու պատասխանում. «սալուդ», ու վերև բարձրացնում սեղմած բռունցքները: Այս շարժումը—ժողովրդական ճակատի վողջույնը—նրանց կյանքի գնով եր հատուցվում: Յերեխաներին սպանում էլին հրացանի կոթերով, ծակծկում էլին սվիններով, ատրճանակով գնդակահարում:

Յերբ Պեդրոն այդ մասին պատմում եր ջոկատում իր չափահաս ընկերներին, աչքերին արցունք եր լերևում: Մարտիկների խիստ դեմքերը մռայլվում էլին և սեղմվում էլին բռունցքները:

—Վոչինչ, ասում էլին նրանք իրենց պատանի ընկերոջը, — մենք քեզ հետ միասին այդ բարբարոսներից կհանենք մեր լեռեխաների, մեր մայրերի մեր փառապանծ Իսպանիայի վրեժը:

ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԿԱՐԱՑՈՒՊԱՆ

Պոլտավկա ուղեփակը (застава) գտնվում ե ուղղակի սահմանի վրա: Մի փոքր գետակ միայն բաժանում ե մանջուրական Սանչազոու քաղաքից: Ուղեփակի պատուհանից լերևում ե քաղաքի անցուղարձը և լավում ե քաղաքի աղմուկը: Հարյուրավոր մարդիկ բահերով աշխատում են կակաչի դաշտերում: Քաղաքալին ջրաղացի մոտ քայլում են մանջուրական զինվորները: Լավում ե գետում լողացողների աղմուկը, պարզ լերևում ե խճուղին՝ լի բեռնատար ավտոներով ու զինված մարդկանցով:

Յերեկոյան Սանչազոու շուտ են հանգցնում ճրագները: Յեղեգնով և մանր թփուտներով ծածկված ճահճոտ հովտի վրա իջնում ե գիշերը: Միթե այդպես խոր ե քնում մանջուրական քաղաքը: Միթե այդպես լուռ ե մերձափնյա լեղեգնուտում:

Ամենից շատ այդ լուռությանը չի հավատում ուղեցույց Կարացուպան, իր չորքոտանի ընկերոջ՝ հետախույզ շան Խոդուսի հետ: Հարյուրավոր անգամ անցնելով սահմանի վրայով,

նա համոզվում եր, թե ինչքան խաբուսիկ ե
այդ լուսթյունը: Սահմանապահի զգոն ականջը
վորսում ե ամեն մի շրջուն, և գիշերվա ձախ
ները նրան շատ բան են ասում: Ահա հեռվում,
կիսաքանդ ֆանդաների (չինական խճիթ)
մոտ, խոտերի մեջ լեռնաց փասխանը: Ուղե-
ցույցն ու շունը վրա լեն հասնում պարզելու—
հվ եր, վոր խանգարեց դաշտալին թռչունի
հանգիստը: Յեղեգներում լավում են այծյամի
վոստյունները: Մի քանի վոստյունից հետո,
կենդանին լուծ ե, ականջ դնում: Լսում ե
և, Կարացուպան: Նա չի հավատում. նա գիտի,
վոր սահմանախախտները հաճախ նմանեցնում
են այծյամի վազքին իրենց քայլերը:

Մարդն ու շունն իրար հասկանում են: Սահ-
մանի վրա անցկացրած՝ վտանգներով լի՝ չորս
տարիները նրանց փոխադարձաբար ընտելաց-
րին: Կարացուպան դաստիարակեց Ինդուսին,
մեծ հոգատարությամբ ու ջերմ սիրով: Սահմա-
նամերձ շների դպրոցում Ինդուսը մի փոքրիկ,
վտիտ լակոտ եր: Պարապմունքներին մի կերպ
դեռ գնում եր, իսկ պարապմունքից հետո նրան
իր ձեռքերի վրա լեր տուն տանում Կարա-
ցուպան:

—Սպասիր, շներ կստանանք, քեզ համար մի
ուրիշը կվերցնես,—ասում եր դպրոցի պետը:

Բայց ահա հասավ ժամանակը, լերը Կարա-
ցուպան վոչ մի կերպ չեր ուզում բաժանվել իր
շնից: Նա խնամեց ու մեծացրեց նրան: Շնիկի
համար նա կաթնով եր լեփում, վանդակի մեջ
ծածկում եր նրան իր շինելով (վերարկուլով), և
լերը Ինդուսն ամրացավ, Կարացուպան նրա
մեջ դաստիարակեց այնպիսի հատկություն-
ներ, վորոնք նրա սանին դարձրին մի հրաշալի
—հետախույզ շուն, սահմանապահի համար ան-
փոխարինելի ոգնական:

Դպրոցը վերջացնելուց հետո Կարացուպան
լեկավ Պուտավկա ուղեփակը (заस्ताва): Այս-
տեղ, տարիների ընթացքում նա իր շան հետ
հարյուրավոր սահմանախախտներ ե բռնել ըն-
կեր Լ. Մ. Կազանովիչի անվան ջոկում:

Անցյալ տարի նա և բանակալին խորամուկն
անցնում ելին գիշերալին հսկողության: Սահ-
մանի վրա Ինդուսը մոմռաց: «Մի բան կա»,
—մտածեց ուղեկցողը: Շունը մի պտույտ գոր-
ծեց և նետվեց մեր սահմանի խորքը:

—Հը, ի՞նչ կասես, խորամուկ, կհետևես ինձ, —
հարցրեց Կարացուպան:

—Կհետևեմ,—պատասխանեց մարտիկը:

Չուր չեր այդ հարցը տալիս Կարացուպան:
Սահմանի վրա վոչ վոք չեր կարողանում նրան
հասնել: Յերբ ուղեցուցն ու Ինդուսը գնում են

նկատած հետքերով, նրան կարելի չե միայն ձիով հասնել:

Չորս կիլոմետր վազելով շան լեռներից, մարտիկը կանգ առավ:

Սահմանից 16 կիլոմետր այս կողմը շուեն ու ուղեկցողը հասան սահմանախախտներին: Կարացուական թեքվեց, վոր լավ նկատի թշնամուն և հանկարծ ցնցվեց: — Դիմացը կանգնած ելին իննը մաքսանենդ: Ի՞նչ անել: Կարացուական միայն մի նազան եր վերցրել: Բայց և այնպես նա վորոշեց բռնել թշնամիներին: Մոտենալով սահմանախախտներին, նա բարձր կանչեց, «կանգնել»: Մարդիկ իսկույն գետին թափվեցին: Կարացուական վորոշեց խաբել սահմանախախտներին: Նա ձայն տվեց մթության մեջ, իբրև սահմանապահների ջոկին:

— Նհեյ, Խարլամով, Զալգանով, լերկու կողմից մոտեցեք չորս-չորս: Բայց տեսեք, լեթե մեկն ու մեկը կփախչի, իսկույն գնդակահարեցեք: Իսկ լես կսկսեմ խուզարկել նրանց:

Հնարագետ սահմանապահը հաջողությամբ կատարեց իր պլանը: Խուզարկելով սահմանախախտներին նա տաս կիլոմետր ուղեկցեց նրանց և տարավ սահմանագծային պարետի մոտ,

մթնոմը հրամաններ տալով վորպես թե իրեն հետ գնացող ընկերներին:

Նա վաղուց ե լրացրել իր ծառայության ժամկետը: Կարող ե տուն գնալ: Բայց չի պնում: Այս գարնանը նա ավելի չե մտերմացել իր շանը: Վերջերս շունը փրկեց Կարացուական կյանքը:

Մալխի 3-ի գիշերն եր: Կարացուական մի ուրիշ մարտիկի՝ Շիլովի հետ պահակության դուրս լեկավ: Մադյանի կղզու մոտ Ինդուսն սկսեց անհանգստանալ: Յերևում եր, վոր կղզում մարդ կա:

Անձրևներից վարարած Սուլֆին դետն անցան մաշված լաստով՝ սահմանապահ ընկերներն ու շունը: Կղզու վրա, մի քանի ժամ խուզարկեցին լեդեգներն ու թփուտները մինչև համոզվեցին, վոր վոչ վոք չկա, բացի մանջուրական սահմաններից լեկած մի քանի շներից: Ժամանակն եր լետ դառնալու:

Գետը շարունակում եր բարձրանալ ու վունում եր: Լաստը տարվեց ջրի խելագար հոսանքով և շուռ լեկավ: Մարդիկ ու շունը ջուրը թափվեցին: Ինդուսն անմիջապես դուրս լողաց և ափին նստած տիրոջն եր սպասում: Քանի դեռ սահմանապահներ շինելները չեին թըրջվել և տարածվել ելին ջրի լերեսին, Կարացու-

պան ու Շիրովը պահում ելին իրենց: Բայց շուտով շինեւները թրջվեցին: Հրացանները, պալուսակները, կոշիկներն ու նռնակները — ծանրը բռն ելին լողորդների համար: Սահմանապահներն սկսեցին սուզվել: Կարացուպան ձայն տվավ Ինդուսին: Շունը լողալով մոտեցավ տիրոջը, նրա գլխից պոկեց շլոմը (սաղավարտ)* և դեպի ափը լողաց: Կարացուպան խեղդվում էր: Մեկ անգամ ել ձայն տվեց ընկերոջն ու անհայտացավ ջրի տակ: Ինդուսը թողեց գլխարկն ու մի ակնթարթում սուզվեց: Նա ատամներով պինդ բռնեց սահմանապահի ուսից, դուրս քաշեց ջրի լերեսը և սկսեց դեպի ափը լողալ: Յերբ Կարացուպան արդեն վտանգից ազատ էր, Ինդուսն շտապեց Շիրովին ոգնելու:

Յես լերբեք լաց չեմ լեղել — ասում էր այս դեպքից հետո Կարացուպան: Կարծում եմ, վոր Շիրովն ել վախկոտներից չէ: Բայց լեթե դուք տեսնելիք, թե ինչպես մեր առջև թռչկոտում էր Ինդուսը, ինչպես եր լիզում մեր լերեսն ու ձեռքերը, ինչպես ուրախացել էր մեր փրկության պատճառով... Կներե՞լիք մեզ այն արցունքների համար, վոր թափեցինք, այդ գիշեր Սուլֆուրի ափերին:

* Շլոմ — կարմիր բաժակային գլխարկ, սաղավարտ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0928098

5 ЯНВ 1938

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.

1
3678

ЮНЫЙ РАЗВЕДЧИК
(на армянский язык)
Гиз Арм. ССР, Ереван, 1937 г.